ՀԱՎԵՐԺ ՄԻԱՍԻՆ ԵՆՔ

Արհավիրքի առաջին օրերին ԼՂԻՄ-ի Մարտակերտի շրջանային հիվանդանոցի կոլեկտիվն առաջիններից մեկը պատրաստակամություն հայտնեց օգնելու մեր աղետյալ հայրենակիցներին: Կարճ ժամանակամիջոցում հանգանակվեց մոտ 5000 ռուբլի, գնեցինք 1500 ռուբլու դեղորայք և բժշկական հրեք բրիգադներով մեկնեցինք աղետի վայր: Մեր բուժաշխատողները տեղում օգնություն ցույց տվեցին տուժածներին: Բացի այդ, հավաքած փողով 2100 ռուբլու մթերք ձեռք բերեցինք և ուղարկեցինք տուժած շրջաններ: Բուժաշխատողներն իրենց երեք օրվա աշխատավարձը՝ 10 հազար ռուբլի, փոխանցեցին 700412 հաշվին: Այդ հաշվին է փոխանցվել նաև տոնական հանդիսությունների համար հատկացված 3000 ռուբլին: Մի խումբ բուժքույրեր մեր հիվանդանոցից գործուղվել են Երևանի հիվանդանոցները՝ հիվանդներին խնամելու համար: Նախատեսվում է առաջիկայում ևս նման բրիգադներ կազմակերպել:

Մենք պատրաստ ենք մեզ մոտ ընդունելու տուժածների ընտանիքների, անօթևան մայրիկանց: Դանդ է ժամը, խորն է վիշտը: Բայց և սիրտներս ուռչում է հպարտությունից, երբ տեսնում ենք, որ այս դժվար ժամին մենակ չենք:

Հարգելի խմբագրություն, մենք՝ բուժաշխատողներս, մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում սովետական և արտասահմանյան մեր կոլեգաներին՝ իրենց անձնուրաց աշխատանքի համար:

Մեր սերն ենք հայտնում ռուս մեծ ժողովրդին, վրաց եղբայրներին, սովետական մյուս ժողովուրդներին, որ օգնեցին ամեն ինչով և այժմ էլ պատրաստակամ եկել են կառուցելու մեր ավերված քաղաքները:

Այդ ամենը մեզ ստիպում է տոկալ, համբերել, ապրել հրպարտությամբ ու արժանապատվությամբ: Ապրել և մտածել, որ պարտք ենք Լենինականին ու Կիրովականին, Սպիտակին ու Ստեփանավանին: Այնքան, մինչև մոխիրներից հառնեն այդ քաղաքները, պարտք ենք Ջաջուռին ու Նալբանդին և շատ այլ գյուղերի, այնքան, մինչև նրանց տների երդիկներից նորից ծուխը ելնի և դողանջեն դպրոցական զանգերը: Եվ միշտ պատրաստ ենք օգնելու մեր քույրերին ու եղբայրներին:

Միլետա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԼՂԻՄ, ք. Մարտակերտ,
շրջանային հիվանդանոցի
բժշկուհի